**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ**
**ՆԱԽԱԳԱՀ**

**2021 թվականի հունիսի 10-ի**

# ՌՈՅԱԼԹԻ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՌՈՅԱԼԹԻԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**N 144-Ն**

**ՀՐԱՄԱՆ**

Հիմք ընդունելով «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքի 13.8-րդ հոդվածի 3.1-ին մասը՝

***Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝***

1. Սահմանել ռոյալթի վճարողի կողմից 2021 թվականի ռոյալթիի կանխավճարի մեծությունը ինքնուրույն որոշելու մասին հայտարարության ձևը՝ համաձայն հավելվածի:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Դ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**2021 թվականի հունիսի 10**
**ք. Ստեփանակերտ**

Հավելված
Արցախի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2021 թվականի հունիսի 10-ի
N 144-Ն հրամանի

**Ձև**

| | |
|---|---|
| **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՅԱԼԹԻ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՌՈՅԱԼԹԻՒ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ** | Փաստաթղթի հերթական համարը ______________________ *(լրացվում է հարկային մարմնի կողմից)* |
| 1. Ռոյալթի վճարողի անվանումը | 2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) |
| 3. Ներկայացման օրը | ամիսը |

1) «Փաստաթղթի հերթական համարը» մասում լրացվում է հարկային մարմնում առկա՝ կազմակերպության անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը:
2) 1-ին կետում լրացվում է կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը, իսկ 2-րդ կետում՝ հարկ վճարողի հաշվառման համարը:
3) 3-րդ կետում լրացվում է կազմակերպության կողմից հարկային մարմին հայտարարության ներկայացման օրը և ամիսը:

| Նախորդ տարվա նկատմամբ ռոյալթիի գումարը պակաս նախատեսելու հետևանքով 2021 թվականի ռոյալթիի կանխավճարները հաշվարկել հետևյալ չափով՝ | Եռամսյակային չափը [4] | Ընդամենը 2021 թվականի համար [5] |
|---|---|---|
| | | |
| Տեղյակ եմ կանխավճարների տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի ռոյալթիից պակաս լինելու դեպքում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքի 13.8-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված պատասխանատվության մասին: | | |

4) [4] սյունակում լրացվում է նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա ռոյաթիի գումարը պակաս նախատեսելու (այդ թվում՝ ընթացիկ տարում ռոյալթիի հաշվարկման օբյեկտ չնախատեսելու) դեպքում կազմակերպության կողմից 2021 թվականի համար հաշվարկված կանխավճարի եռամսյակային մեծությունը:
5) [5] սյունակում լրացվում է կազմակերպության կողմից 2021 թվականի համար հաշվարկված կանխավճարի գումարը:

Կազմակերպության տնօրեն ______________ ______________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հաշվապահ ______________ ______________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

*Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում հայտարարությունը լրացվում է երկու օրինակից:*
*Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է կազմակերպությանը:*